

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Կոդ TRM15-0003-06 PUB	Խմբագրություն 141
Կազմեց	Հաստատված
Բիզնես գործընթացների կառավարման բաժին	Վարչության 17/11/2025թ. թիվ 55 արձանագրությամբ Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան_____
Կիրառման ոլորտ	Վարկավորման, հաճախորդներին տեղեկատվության տրամադրման և տեղեկատվության հրապարակման գործընթացներում ներգրավված տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներ:
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում	Կորպորատիվ վարկավորման վարչություն, Սպառողական վարկավորման վարչություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	28/11/2025թ.-ից
Ուժը կորցնելու ամսաթիվ	

Վարկավորման պայմաններով և սակագներով (Այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ (Այսուհետ՝ Բանկ) կողմից վարկերի տրամադրման հիմնական պայմանները:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1. Պայմանները մշակվել է հիմք ընդունելով Բանկի Խորհրդի կողմից հաստատված վարկավորման գործընթացները կարգավորող ներքին իրավական ակտերը:
- 2.2. Պայմանները հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ:
- 2.3. Սույն պայմաններից շեղումներով վարկերի տրամադրման որոշումները կայացվում են Գլխավոր վարկային կոմիտեի կողմից: Գործող վարկերի, սույն պայմաններից շեղումներով վերանայման որոշումները կայացվում են Բանկում գործող վարկային կոմիտեների կողմից՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված լիազորությունների սահմաններում: Սույն պայմաններից շեղումներով վարկերի տրամադրման և պայմանների վերանայման հայտերը Բանկի վերոնշյալ լիազոր մարմինների քննարկմանը կարող են ներկայացվել միայն բավարար հիմնավորվածության պարագայում:
- 2.4. Սույն Պայմաններով սահմանված տոկոսադրույքների միջակայքի սահմաններում կոնկրետ տոկոսադրույքը որոշվում է Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացնող լիազոր մարմնի կողմից՝ հաշվի առնելով տվյալ պահին շուկայում գործող միջին տոկոսադրույքները, ինչպես նաև վարկառուի գործունեության բնույթը, վարկավորման արժույթը, վարկավորման ժամկետը, գրավի իրացվելիությունը և այլ չափորոշիչներ, որոնք սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով:
- 2.5. Սույն պայմաններով նշված ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք են հանդիսանում ՀՀ քաղաքացի հանդիսացող և ՀՀ քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձինք, համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի:
- 2.6. Սույն Պայմաններով սահմանված բոլոր վարկատեսակների գծով վարկային հայտի ուսումնասիրման վճարները գանձվում են հաճախորդից միանվագ և չեն վերադարձվում՝ անկախ Բանկի կողմից ընդունված վարկային հայտի դրական կամ բացասական որոշումից:
- 2.7. Սույն Պայմաններով սահմանված, բոլոր վարկատեսակների գծով վարկային հաշվի սպասարկման վճարը գանձվում է միանվագ կարգով՝ վարկի տրամադրման պահին, ընդ որում, եթե հաճախորդի համար հաստատվել է միաժամանակ մեկից ավելի վարկային պրոդուկտներ, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված է առանձին վարկային հաշվի սպասարկման վճար, ապա իրականացվում է մեկ միասնական վճարի գանձում՝ հաշվարկի համար հիմք ընդունելով Լիազոր մարմնի կողմից հաստատված վարկային հայտերի հանրագումարը:
- 2.8. Սույն Պայմաններով սահմանված վարկի մարման եղանակները ունեն հետևյալ նշանակությունը՝
 - «Անուիտետային» - (հավասարաչափ ամսական մարում), որի մեջ փոփոխական մասերով մտնում են մայր գումարը և կուտակված տոկոսները,
 - «Զսպանակաձև» - (փոփոխական ամսական մարում), որի մեջ մայր գումարի մարումը մտնում է հավասար չափով, իսկ կուտակված տոկոսները՝ փոփոխական:
 - «Միանգամյա» - Վարկի մայր գումարի մարումը կատարվում է ժամկետի վերջում, իսկ տոկոսագումարները ամենամսյա:
- 2.9. Վարկի մարման ժամանակացույցը խախտելու դեպքում վարկի ժամկետանց մասի վրա կարող է կիրառվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, որը ամրագրվում է վարկային պայմանագրով:
- 2.10. Սույն «Պայմաններով և սակագներով» սահմանված պրոդուկտների հիման վրա կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում առաջարկվող վարկավորման պայմանները, այդ թվում ապառիկ առևտրի ֆինանսավորման պայմանները յուրաքանչյուր կազմակերպության համար առանձին տեղակայվում են Բանկի ներքին ցանցի [Օ:Համագործակցության Պայմանագրեր](#) թղթապանակում:

• Ֆիզիկական անձանց տրամադրվող անհատական վարկեր ըստ պրոդուկտների

- 1) [Բնակարանային հիփոթեքային վարկ](#)
- 2) [Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար բնակարանային հիփոթեքային վարկեր](#)
- 3) [Սեկտորային հիփոթեքային վարկ](#)
- 4) [Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրով ձեռքբերման վարկեր](#)
- 5) [Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրով կառուցապատման վարկեր](#)
- 6) [Ազգային Հիփոթեքային Ընկերություն ծրագրով վերանորոգման վարկեր](#)
- 7) [Հիփոթեքային վարկ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան»](#)
- 8) [Հիփոթեքային վարկեր \(Արցախի հանրապետության առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիր\)](#)
- 9) [Հիփոթեքային վարկեր \(Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիր\)](#)
- 10) [Վերանորոգման հիփոթեքային վարկեր \(պետական աջակցության ծրագրերի շրջանակում\)](#)
- 11) [Հիփոթեքային վարկեր Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիր](#)
- 12) [Հիփոթեքային վարկեր Զինծառայողներին](#)
- 13) [Բանկի ռեսուրսով միկրովերանորոգման վարկեր](#)
- 14) [Ավտոկայանատեղի ձեռքբերման վարկ](#)
- 15) [Հողամասի ձեռքբերման հիփոթեքային վարկ](#)
- 16) [Ավտոմեքենայի ձեռք բերման նպատակով վարկ](#)
- 17) [Գույքի գրավով ապահովված անհատական վարկ \(վարկունակության գնահատմամբ\)](#)
- 18) [Գույքի գրավով ապահովված անհատական վարկ \(առանց եկամուտների\)](#)
- 19) [Երաշխավորությամբ ապահովված անհատական վարկ](#)
- 20) [«ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ» սպառողական վարկեր \(ծրագրային\)](#)
- 21) [Ոսկու գրավով \(յուբրադային\) վարկ](#)
- 22) [Ոսկու գրավով \(յուբրադային\) վարկեր վարկունակության գնահատմամբ](#)
- 23) [Visa Infinite վճարային քարտերով տրամադրվող վարկային սահմանաչափ](#)
- 24) [Evolution](#)
- 25) [Action օնլայն վարկ](#)
- 26) [Օնլայն օվերդրաֆտներ վճարային քարտերով \(վարկային քարտեր\)](#)
- 27) [Օվերդրաֆտներ վճարային քարտերով \(վարկային քարտեր\)](#)
- 28) [Գործընկեր կազմակերպությունների էլեկտրոնային դրամապանակների միջոցով սպառողական վարկերի տրամադրման պայմաններ](#)
- 29) [Ապառիկ Evoca Home](#)
- 30) [Անհատական վարկ «Ներդրումային»](#)
- 31) [Ավտոկայանատեղի ձեռք բերման վարկ](#)
- 32) [Հողամասի ձեռքբերման հիփոթեքային վարկ](#)

33) Արևային ֆոտովոլտային համակարգերի ձեռք բերման ԱՊԱՌԻԿ

• Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող առևտրային վարկեր ըստ պրոդուկտների

- 1) Բիզնես վարկ
 - 2) Միկրոբիզնես վարկ
 - 3) Միկրոբիզնես +
 - 4) Փոքր և միջին բիզնեսի վարկավորում
 - 5) Փոքր և միջին բիզնեսի վարկավորում Լիկվիդ +
 - 6) Փոքր և միջին բիզնեսի վարկավորում «Գործընկեր»
 - 7) Վերականգնվող վարկային գիծ
 - 8) Չվերականգնվող վարկային գիծ
 - 9) Հաշվի վարկավորում
 - 10) «ԳՀՀ - Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի պայմաններ
 - 11) Պարզ բիզնես վարկ
 - 12) ՀՀ կառավարության առաջին միջոցառման ներքո տրամադրվող վարկ
 - 13) ՀՀ կառավարության երրորդ միջոցառման ներքո տրամադրվող վարկ
 - 14) «Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորվող» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի պայմաններ
 - 15) Վարկեր Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ծրագրի շրջանակներում
 - 16) Վարկեր Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ծրագրի շրջանակներում Էլեկտրական մեքենաների ձեռք բերման նպատակով
 - 17) KFW բանկի կողմից ֆինանսավորվող «Միկրո, Փոքր և Միջին Ձեռներեցության ֆինանսավորում»
 - 18) Բիզնես վարկ POS տերմինալի շրջանառության հիման վրա
 - 19) Բիզնես Օվերդրաֆտ POS տերմինալի շրջանառության հիման վրա
 - 20) «Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորվող» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր
 - 21) «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի» հետ համագործակցության շրջանակներում տրամադրվող վարկեր
- Բանկային երաշխիքներ
- Ֆակտորինգային ֆինանսավորում
- Լիզինգ
- Աշխատավարձային նախագծերի և դրանց շրջանակներում տրամադրվող վարկային սահմանաչափի միասնական պայմաններ
- Ավանդի գրավով ապահովված վարկային սահմանաչափ
- Ավանդի գրավով ապահովված օնլայն վարկ/վարկային սահմանաչափ
- Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով ապահովված վարկ

3. Ֆիզիկական անձանց տրամադրվող վարկեր

3.1. Բնակարանային հիփոթեքային վարկեր

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է բնակելի նշանակության անշարժ գույքի՝ բնակարանի, առանձնատան, բնակելի տան (առաջնային և երկրորդային շուկայից) ձեռք բերման կամ վերանորոգման կամ առանձնատան, բնակելի տան կառուցապատման նպատակով:	
2.	Ովքեր կարող են դիմել	18 – 65 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարեկանը կամ ավել է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:	
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ	
4.	Վարկավորման գումար	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	2,000,000 – 80,000,000 ՀՀ դրամ
		Անշարժ գույքի ձեռքբերում առանց եկամտի վերլուծության	2,000,000 – 50,000,000 ՀՀ դրամ
		Վերանորոգում	1,000,000 – 10,000,000 ՀՀ դրամ
5.	Վարկի մարման ժամկետը	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	60 – 180 ամիս
		Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում լողացող տոկոսադրույքի դեպքում	60 – 240 ամիս
		Վերանորոգում	60 – 84 ամիս
	Տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	14-15%
		Անշարժ գույք ձեռք բերում առանց եկամտի վերլուծության	15-16%
		Վերանորոգում	15-17%
		Բանկի կողմից հաճախորդի փոխարեն գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)	Վարկի տոկոսադրույք + 0.2%
6.	Տարեկան փաստացի տոկոսադրույք /հաստատուն/	15.2 – 18.7 %	
7.	Տարեկան անվանական տոկոսադրույք /լողացող/	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	Սկսած 13.2%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 4.2%-ից + փոփոխուն բաղադրիչ)
		Անշարժ գույք ձեռք բերում առանց եկամտի վերլուծության	Սկսած 14.2%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 5.2%-ից + փոփոխուն բաղադրիչ)
		Վերանորոգում	Սկսած 14.2%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 5.2%-ից + փոփոխուն բաղադրիչ)
		Լողացող տոկոսադրույքի տատանման առավելագույն և նվազագույն շեմ	±4%
		Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը կսկսի վերանայվել վարկի կնքման պահից 36 ամիս (Վերանորոգման վարկերի դեպքում՝ 12 ամիս) ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթվից սկսած և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ կիրառելով վերանայման պահին Բանկում գործող (կայքում փաստացի հրապարակված) տոկոսադրույքը:	

evocaBANK		Վարկավորման պայմաններ և սակագներ		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.	
		Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ			
8.		Բանկի կողմից հաճախորդի փոխարեն գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)		Վարկի տոկոսադրույք + 0.2%	
9.	Տարեկան փաստացի տոկոսադրույք /լողացող/	9.7 – 18.4 %			
10.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Այլ ֆինանսական կազմակերպության կողմից Վարկի վերաֆինանսավորման դեպքում (վարկը ամբողջությամբ մարելիս) Բանկն իրավունք ունի Վարկատուից գանձել միանվագ տուգանք հետևյալ չափերով՝ 1. Վարկի մնացորդի առավելագույնը 0.6 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության առաջին տարվա ընթացքում, 2. Վարկի մնացորդի առավելագույնը 0.4 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության երկրորդ տարվա ընթացքում, 3. Վարկի մնացորդի առավելագույնը 0.2 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության երրորդ տարվա ընթացքում:			
11.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:			
12.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:			
13.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	1. Ձեռք բերվող, վերանորոգվող անշարժ գույք, այլ անշարժ գույք: Կառուցապատման դեպքում հողամասը, որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը/կառուցվող անշարժ գույքը: 2. Կառուցապատվող շենքից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, կառուցապատվող շենքի տվյալ անշարժ գույքը գնելու իրավունքը: 3. Կառուցապատվող շենքից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, եթե կառուցապատողի հատուկ հաշիվը գտնվում է այլ բանկում, կառուցապատվող շենքի տվյալ անշարժ գույքը գնելու իրավունքը, ինչպես նաև այլ անշարժ գույք, որի շուկայական արժեքը չպետք է ցածր լինի տրամադրվող վարկի գումարի չափից: 4. Բացի անշարժ գույքի գրավադրումից վարկառուից կարող է պահանջվել նաև առնվազն մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորություն:			
14.	Վարկ/գրավ հարաբերակցությունը ¹	Առաջնային շուկայից (կառուցապատողից) ձեռք բերում ²		Գնահատված արժեքի մինչև 90%	
		Երկրորդային շուկայից ձեռք բերում		Գնահատված արժեքի մինչև 85%	
		Առանց եկամտի վերլուծության		Գնահատված արժեքի մինչև 70%	
		Կառուցապատում և վերանորոգում		Գնահատված արժեքի մինչև 70%	
		Լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում, վարկի գումարը չպետք է գերազանցի ձեռք բերվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքը՝ պահպանելով գրավադրվող բոլոր գույքերի գնահատված շուկայական արժեքների հանրագումարի 70% «Վարկ/գրավ» հարաբերակցությունը:			
Ապահովագրություն		Անշարժ գույքի ապահովագրություն- պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի չափով:			
15.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/ Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերը տրամադրվում են միանվագ կամ փուլային, որը սահմանվում է Վարկի տրամադրման որոշումը կայացնող Լիազոր մարմնի կողմից: Վարկը փոխելով տրամադրման դեպքում, փուլերը սահմանվում է՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից ներկայացված կատարվելիք ծախսերի նախահաշիվը, վարկի ժամկետը, գումարի չափը, Հաճախորդի վարկունակությունը:			
16.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուն Բանկում մուտքագրում է կանխավճար³, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանանագրեր/համաձայնագրեր:			
17.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:			

3.2. Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար բնակարանային հիփոթեքային վարկեր

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է բնակելի նշանակության անշարժ գույքի՝ բնակարանի, առանձնատան, բնակելի տան (առաջնային և երկրորդային շուկայից) ձեռք բերման նպատակով:
2.	Ովքեր կարող են դիմել	18 – 65 տարեկան ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի

¹ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:
² Անավարտ շինության դեպքում (Կառուցապատողից ձեռքբերման դեպքում) որպես գրավի արժեք հանդիսանում է կառուցապատողի կողմից տրամադրված փողերի և հետագայում առուվաճառքի պայմանագրում նշված առուվաճառքի գինը
³ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

evocaBANK		Վարկավորման պայմաններ և սակագներ		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.			
		65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող ոչ ռեզիդենտ համավարկառու:					
3.	Վարկավորման արժույթը	ԱՄՆ դոլար, Եվրո, ՀՀ դրամ					
4.	Վարկավորման գումար	2.000.000-80.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ					
5.	Վարկի մարման ժամկետը	60 - 180 ամիս					
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ ⁴	Արժույթ	Հաստատուն	Փաստացի	Լողացող	Փաստացի	
		ԱՄՆ դոլար	9.2% - 11 %	9.8-11.8%	Սկսած 9.2%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 8.2 %-ից + փոփոխուն բաղադրիչ)	5.5-16.3%	
		Եվրո	8.2% - 10 %	8.7-10.7%	Սկսած 7.7%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 7.7 %-ից + փոփոխուն բաղադրիչ)	4.45-15.2%	
		ՀՀ դրամ	14-15 %	15.2-16.3%	Սկսած 13.2%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 4.2%-ից + փոփոխուն բաղադրիչ)	9.7–18.4%	
		Լողացող տոկոսադրույքի տատանման առավելագույն և նվազագույն շեմ					±4%
		Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը կսկսի վերանայվել վարկի տրամադրման պահից 36 ամիս ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթվից սկսած և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ կիրառելով վերանայման պահին Բանկում գործող (կայքում փաստացի հրապարակված) տոկոսադրույքը: Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ					
		Բանկի կողմից հաճախորդի փոխարեն գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)			Վարկի տոկոսադրույք + 0.2%		
7.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում					
8.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:					
9.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:					
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Ձեռքբերվող անշարժ գույք Գնման իրավունք՝ կառուցապատողին ձեռքբերման դեպքում: Բացի անշարժ գույքի գրավադրումից վարկառուից կարող է պահանջվել նաև ՀՀ ռեզիդենտ հանդիսացող առնվազն մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորություն:					
11.	Վարկ/գրավ հարաբերակցությունը ⁵	Գնահատված արժեքի մինչև 70% Լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում, վարկի գումարը չպետք է գերազանցի ձեռք բերվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքը՝ պահպանելով գրավադրվող բոլոր գույքերի գնահատված շուկայական արժեքների հանրագումարի 70% «Վարկ/գրավ» հարաբերակցությունը:					
12.	Ապահովագրություն	Անշարժ գույքի ապահովագրություն- պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի չափով:					
13.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/					
14.	Վարկունակության գնահատում	Հաճախորդը չպետք է ունենա վերջին 1 տարվա ընթացքում վարկային պարտավորությունների գծով դասակարգումներ և մարումների գծով ուշացման օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը: Եկամուտների վերլուծություն չի իրականացվում:					
15.	Այլ պայմաններ	- Վարկառուն Բանկում մուտքագրում է կանխավճար⁶, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանագրեր/համաձայնագրեր: - Հաճախորդը պետք է ներկայացնի եկամտի աղբյուրների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն					
16.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:					

3.3. Առևտրային հիփոթեքային վարկեր

⁴ Բանկի կողմից հաճախորդի փոխարեն գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)՝ նշված տոկոսադրույք + 0.2%:

⁵ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

⁶ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է առևտրային նշանակության անշարժ գույքի՝ արտադրական, հասարակական կամ այլ առևտրային տարածքի, շինության (առաջնային և երկրորդային շուկայից) ձեռքբերման, վերանորոգման, արդիականացման կամ կառուցապատման նպատակով:			
2.	Ովքեր կարող են դիմել	18– 65 տարեկան ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:			
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո			
4.	Վարկավորման գումար	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	10,000,000 - 120,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ		
		Վերանորոգում	5,000,000-50,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ		
5.	Վարկի մարման ժամկետը	Անշարժ գույք ձեռք բերում, Կառուցապատում	Հաստատուն տոկոսադրույքով	60 -180 ամիս	
			Լողացող տոկոսադրույքով	60 - 240 ամիս	
		Վերանորոգում	Հաստատուն տոկոսադրույքով	60 -84 ամիս	
			Լողացող տոկոսադրույքով	60 -84 ամիս	
6.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ (հաստատուն) ⁷	ՀՀ դրամ	14% - 17%		
		ԱՄՆ դոլար	9.2% - 11%		
		Եվրո	7.2% - 10%		
7.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ (լողացող) ⁸	ՀՀ դրամ	Սկսած 13.2% - ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 4.2%-ից + փոփոխուն բաղադրիչ)		
		ԱՄՆ դոլար	Սկսած 9.2% - ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 8.2%-ից + փոփոխուն բաղադրիչ)		
		Եվրո	Սկսած 7.2% - ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 7.2%-ից + փոփոխուն բաղադրիչ)		
		Լողացող տոկոսադրույքի տատանման առավելագույն և նվազագույն շեմ			
		±4%			
		Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը կսկսի վերանայվել վարկի կնքման պահից 12 ամիս ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթվից սկսած և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ կիրառելով վերանայման պահին Բանկում գործող (կայքում փաստացի հրապարակված) տոկոսադրույքը: Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ (Սույն կետով սահմանված տեղեկատվությունը, փոփոխուն բաղադրիչները և վերոնշյալ հոդմամբ ներկայացված լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգը պարտադիր պետք է հրապարակվի Բանկի ինտերնետային կայքում):			
8.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում			
9.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:			
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Ձեռք բերվող, վերանորոգվող անշարժ գույք, այլ անշարժ գույք: Կառուցապատման դեպքում հողամասը, որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը/կառուցվող անշարժ գույքը :			
11.	Վարկ/գրավ հարաբերակցությունը ⁹	Առաջնային շուկայից (կառուցապատողից) ձեռք բերում ¹⁰	ՀՀ դրամ	Գնահատված արժեքի մինչև 90%	
		Երկրորդային շուկայից ձեռք բերում	Արտարժույթ	Գնահատված արժեքի մինչև 70%	
			ՀՀ դրամ	Գնահատված արժեքի մինչև 85%	
		Առանց եկամտի վերլուծության ձեռքբերում	Արտարժույթ	Գնահատված արժեքի մինչև 70%	
			Կառուցապատում և վերանորոգում	Գնահատված արժեքի մինչև 70%	
12.	Ապահովագրություն	Անշարժ գույքի ապահովագրություն- պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի մնացորդի չափով:			
13.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/ Վերանորոգման և կառուցապատման նպատակով Վարկերը տրամադրվում են միանվագ կամ փուլային, որը սահմանվում է Վարկի տրամադրման որոշումը կայացնող Լիազոր մարմնի կողմից: Վարկը փուլերով տրամադրման դեպքում, փուլերը սահմանվում է՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից ներկայացված կատարվելիք ծախսերի նախահաշիվը, վարկի ժամկետը, գումարի չափը, Հաճախորդի վարկունակությունը:			
14.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուն Բանկում մուտքագրում է կանխավճար¹¹, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Վարկառուն կարող է չմուտքագրել կանխավճար, փոխարենը իրականացնելով լրացուցիչ անշարժ գույքի գրավադրում, որի դեպքում Վարկառուին տրամադրվող Վարկի գումարը չպետք է գերազանցի ձեռք			

⁷ Բանկի կողմից հաճախորդի փոխարեն գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)՝ նշված տոկոսադրույք + 0.2%:

⁸ Բանկի կողմից հաճախորդի փոխարեն գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)՝ նշված տոկոսադրույք + 0.2%:

⁹ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

¹⁰ Անավարտ շինության դեպքում (Կառուցապատողից ձեռքբերման դեպքում) որպես գրավ արժեք հանդիսանում է կառուցապատողի կողմից տրամադրված տեղեկանքում և հետագայում առուվաճառքի պայմանագրում նշված առուվաճառքի գինը:

¹¹ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով:

evocaBANK Վարկավորման պայմաններ և սակագներ		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.
		բերվող անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքը՝ պահպանելով գրավադրվող բոլոր գույքերի գնահատված շուկայական արժեքների հանրագումարի 70% «Վարկ/գրավ» հարաբերակցությունը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել կառուցապատողի կողմից տրամադրված նախավճարի անդորրագիր և/կամ նախավճարների պայմանագրեր/համաձայնագրեր: - Անշարժ գույքի գնելու իրավունքը ձեռք բերելու դեպքում, որպես վարկի ապահովման միջոց կարող է հանդիսանալ անշարժ գույքի գնման իրավունքը:
15.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: - Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.4. Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրով ձեռքբերման վարկեր

1.	Վարկի տրամադրման նպատակը	Կառուցվող կամ գոյություն ունեցող բնակելի անշարժ գույքի ձեռքբերում բնակության նպատակով:	
2.	Ովքեր կարող են դիմել	18–65 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում և ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:	
3.	Տեսակները	Ձեռքբերման ստանդարտ վարկեր	Ձեռքբերման Կանաչ վարկեր
4.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ	
5.	Վարկավորման գումար	2,000,000- 35,000,000 ՀՀ դրամ	2,000,000- 45,000,000 ՀՀ դրամ
6.	Վարկի մարման ժամկետը	120 – 240 ամիս	
7.	Վարկավորման անվանական տոկոսադրույքներ	13%	12.5%
		Բանկի կողմից հաճախորդի փոխարեն կանխավճարի, դժբախտ պատահարներից և գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)	Նշված տոկոսադրույք + 0.6%
		Բանկի կողմից հաճախորդի փոխարեն դժբախտ պատահարներից և գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)	Նշված տոկոսադրույք + 0.4%
8.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում	
9.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:	
10.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:	
11.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Գոյություն ունեցող բնակելի անշարժ գույքի ձեռք բերման նպատակով տրամադրված վարկերի դեպքում գրավադրվում է ձեռքբերվող բնակելի անշարժ գույքը, իսկ կառուցվող բնակելի անշարժ գույքի ձեռք բերման նպատակով տրամադրված վարկերի դեպքում վարկի ապահովթուն է հանդիսանում կառուցվող բնակելի անշարժ գույքի գնման իրավունքի և կառուցապատողի հատուկ հաշվին առկա դրամական միջոցների գրավը, մինչև անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը, որից հետո գրավ է հանդիսանում անշարժ գույքը	
12.	Անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված շուկայական առավելագույն արժեքը	55,000,000 ՀՀ դրամ	
13.	Վարկ/գրավ հարաբերակցությունը	1. Ոչ ավելի, քան բնակելի անշարժ գույքի արժեքի 70% ¹² 2. Ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 90%, եթե գրավադրվում է լրացուցիչ բնակելի անշարժ գույք. ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր արժեքի 70% 3. Ձեռքբերման վարկերի դեպքում (եթե գրավ է դրվում միայն ձեռքբերվող գույքը) վարկի գումարը կարող է կազմել գրավի արժեքի առավելագույնը 90%-ը, եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով	
14.	Ապահովագրություն	1. Գրավադրված գույքի ապահովագրություն 2. Վարկառուի և համավարկառու/ներ/ի (առկայության դեպքում)՝ դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրության վկայագրերը: Ընդ որում համավարկառու/ներ/ի առկայության դեպքում դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրությունը կատարվում է վարկի գումարից վարկառուի և համավարկառու/ներ/ի եկամուտներին համամասն: 3. Վարկի գումարը կարող է կազմել առավելագույնը գրավի արժեքի 90%-ը, եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով:	

12 Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

evocaBANK Վարկավորման պայմաններ և սակագներ TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.		Հիփոթեքային պարտավորության ապահովագրությունը պետք է գործի առնվազն մինչև այն պահը, երբ վարկառուին վարկի գումարից կկատարի Վ/Գ գործակցի 70%-ը գերազանցող գումարի չափով վճարում
15.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ
16.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուին Բանկում մուտքագրում է կանխավճար¹³, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Ձեռքբերման հիփոթեքային բոլոր վարկերի դեպքում, երբ բնակելի անշարժ գույքը ձեռք է բերվում կառուցապատողից, շենքը պետք է ունենա էներգետիկ անձնագիր, որում շենքի էԱ դասը առնվազն B է:
17.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: - Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.5. Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրով կառուցապատման վարկեր

1.	Վարկի տրամադրման նպատակը	Բնակելի տների/առանձնատների կառուցում	
2.	Ովքեր կարող են դիմել	18–65 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում և ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:	
3.	Վարկառու	Վարկառուին պետք է լինի կառուցվող բնակելի անշարժ գույքի և հողամասի սեփականատերը, որի վրա կառուցվում/կառուցվել է բնակելի անշարժ գույքը:	
4.	Տեսակները	Կառուցապատման ստանդարտ վարկեր	Կառուցապատման Կանաչ վարկեր
5.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ	
6.	Վարկավորման գումար	2,000,000- 35,000,000 ՀՀ դրամ	2,000,000- 45,000,000 ՀՀ դրամ
7.	Վարկի մարման ժամկետը	120 – 240 ամիս	
8.	Վարկավորման անվանական տոկոսադրույքներ	13%	12.5%
		Բանկի կողմից հաճախորդի փոխարեն կանխավճարի, դժբախտ պատահարներից և գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)	Նշված տոկոսադրույք + 0.6%
		Բանկի կողմից հաճախորդի փոխարեն դժբախտ պատահարներից և գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)	Նշված տոկոսադրույք + 0.4%
9.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում	
10.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:	
11.	Վարկի մարման ձևը	Անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:	
12.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Հողամասը, որտեղ իրականացվում է անշարժ գույքի կառուցումը/կառուցվող անշարժ գույքը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ բնակելի անշարժ գույք:	
13.	Վարկ/գրավ հարաբերակցությունը	Բնակելի անշարժ գույքի արժեքի/ների 70%	
14.	Ապահովագրություն	1. Գրավադրված գույքի ապահովագրություն 2. Վարկառուի և համավարկառու/ներ/ի (առկայության դեպքում)՝ դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրության վկայագրերը: Ընդ որում համավարկառու/ներ/ի առկայության դեպքում դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրությունը կատարվում է վարկի գումարից վարկառուի և համավարկառու/ներ/ի եկամուտներին համամասն:	
15.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ և փուլային տարբերակով	
16.	Այլ պայմաններ	- Բնակելի տների/առանձնատների կառուցման նպատակով վարկերի տրամադրման դեպքում վարկի առավելագույն գումարը չպետք է գերազանցի հաճախորդի կողմից ներկայացված կառուցման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի 80%-ը: - Կառուցման նպատակով վարկերը պետք է տրամադրվեն մասնաբաժիններով (տրանշերով), ընդ որում վարկի վերջին մասնաբաժնով պետք է ֆինանսավորվի շինարարական աշխատանքների վերջին փուլը և չպետք է գերազանցի վարկի գումարի 20%-ը: - Ծրագրի շրջանակում վերանորոգման վարկի նախահաշիվը պետք է կազմել էներգաարդյունավետության գնահատման գործիքի միջոցով: - Եթե հողամասի նկատմամբ վարկառուի սեփականության իրավունքը գրանցվել է ոչ ավել, քան 1 տարի առաջ, ապա պետք է ներկայացնել նաև գրանցման համար հիմք հանդիսացած բոլոր փաստաթղթերը,	

13 Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

evocaBANK Վարկավորման պայմաններ և սակագներ		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.
		որոնք կհավաստեն, որ հողամասի նպատակային նշանակության փոփոխություն տեղի չի ունեցել:
17.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: - Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.6. Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրով վերանորոգման վարկեր

1.	Վարկի տրամադրման նպատակը	Բնակելի անշարժ գույքի վերանորոգում՝բնակարանային պայմանների բարելավում		
2.	Ովքեր կարող են դիմել	18– 65 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում և ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:		
3.	Վարկատեսակները	Վերանորոգման ստանդարտ վարկեր	Վերանորոգման ԷԱ վարկեր	Վերանորոգման ԷԱ միկրովարկեր
4.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ		
5.	Վարկավորման գումար	5,000,001 – 15,000,000 ՀՀ դրամ	5,000,001 – 15,000,000	275,000 – 5,000,000
6.	Վարկի մարման ժամկետը	60 - 84 ամիս		
7.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	13%	12.5%	12.5%
8.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:		
9.	Վարկի մարման ձևը	«Անուիտետային» կամ «Հսպանակաձև»		
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	275,000 – 3,000,000	Երրորդ անձի /անձանց/ երաշխավորություն (անհրաժեշտության դեպքում)	
		3,000,001 – 5,000,000	Երրորդ անձի /անձանց/ երաշխավորություն	
		5,000,001 – 15,000,000	Վերոնորոգվող անշարժ գույք, Երրորդ անձի (անձանց) երաշխավորություն (անհրաժեշտության դեպքում)	
11.	Ապահովագրություն	- Անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ գույքի ապահովագրություն - Վարկառուների՝ դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրություն, որի ծածկույթը պետք է լինի առնվազն վարկի գումարի չափ: - Արևային կայան ձեռքբերելու դեպքում՝ արևային կայանի ապահովագրություն, որի ծածկույթը պետք է լինի արևային կայանի ձեռքբերման գումարի չափով:		
12.	Վարկունակության գնահատում	Եթե դիմումատուն Բանկում ունի գրավադրված անշարժ գույք, ապա 275,000 - 3,000,000 չափով վարկավորվելու դեպքում վարկունակության գնահատում չի կատարվում		
		275,000 – 3,000,000	OTI 100%	
		3,000,001 – 5,000,000	OTI 70%	
		5,000,001 – 15,000,000	OTI 45%	
13.	Այլ պայմաններ	Ծրագրի շրջանակում վերանորոգման վարկի նախահաշիվը պետք է կազմել էներգաարդյունավետության գնահատման գործիքի միջոցով:		
14.	Վարկի տրամադրման նախապայմաններ	Վարկի միջոցների նվազագույնը 30%-ը պետք է ուղղված լինի բնակելի անշարժ գույքի էներգաարդյունավետության բարձրացման համար նախատեսված միջոցառումների և նյութերի/պարագաների ձեռքբերմանը, այդ թվում՝ մինչև վարկի գումարի 10%-ը կարող է ուղղվել էներգախնայող կենցաղային սարքավորումների ձեռքբերմանը (Ծրագրի շրջանակներում ընդունելի էներգաարդյունավետ նյութերի/պարագաների ցանկը և դրանց նկատմամբ պարտադիր սահմանաչափերը սահմանվում են Ծրագրի համար մշակված Գործառնական Ձեռնարկում):		
15.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:		

3.7. Հիփոթեքային վարկ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան»

1.		Առաջնային շուկա	Երկրորդային շուկա
2.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է երիտասարդ ընտանիքներին, գոյություն ունեցող բնակելի անշարժ գույք ձեռքբերելու և մշտական բնակվելու նպատակով: ¹⁴	
3.	Ովքեր կարող են դիմել	ՀՀ քաղաքացիները կամ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձինք, ում ամուսինը հանդիսանում է ՀՀ քաղաքացի: Ամուսինների գումարային տարիքը չպետք է գերազանցի 70-ը , կամ երիտասարդ միայնակ ծնողը, ում տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ):	

¹⁴ Առանձին դեպքերում, եթե Բանկի հետ համագործակցող կառուցապարող ընկերությունը դիմել է համապատասխան մարմին շենքի ավարտական ակտ ստանալու համար, հիփոթեքային վարկը կարող է տրամադրվել նաև անշարժ գույքի գնման իրավունքի ձեռքբերման նպատակով:

evocaBANK		Վարկավորման պայմաններ և սակագներ		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.	
4.	Համավարկառու	Վարկառուի ամուսինը և նրանց երկուսի ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը(ընտանիքի անդամներ են համարվում՝ ամուսինը, վարկառուի և նրա ամուսնու ծնողները, քույրերը և եղբայրները): Համավարկառուների տարիքը չպետք է գերազանցի 65 տարեկանը			
5.	Վայրը	ՀՀ ամբողջ տարածքում			
6.	Վարկավորման արժույթ	ՀՀ դրամ			
7.	Վարկի մարման ժամկետը	120 - 180 ամիս			
8.	Վարկավորման գումար և վարկ/գրավ հարաբերակցություն	Երևանում և ՀՀ մարզերում՝ 27,000,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 80% ¹⁵ : Երևանում և ՀՀ մարզերում՝ 27,000,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 90%, եթե բավարարված է հետևյալ պահանջներից առնվազն մեկը.	Երևանում և ՀՀ մարզերում՝ 22,500,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 70% ²⁹ : Երևանում և ՀՀ մարզերում՝ 22,500,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավելի, քան ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի արժեքի 90%, եթե բավարարված է հետևյալ պահանջներից առնվազն մեկը.		
		ա) տրամադրված վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռքբերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք, ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր արժեքի 80%, բ) տրամադրված վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից ներկայացվում է նաև երաշխավորություն Հայաստանի Հանրապետության խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված՝ 1-ից 300 տեղերը զբաղեցնող իրավաբանական անձանց կողմից: գ) առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ ձեռքբերվող բնակելի տան կամ բնակարանի արժեքի 20 տոկոսի և վարկառուի կողմից 10 կամ ավելի տոկոսի չափով կատարված կանխավճարի տարբերության չափով ¹⁶ :	ա) տրամադրված վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռքբերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի կողմից գրավադրվում է նաև այլ բնակելի անշարժ գույք, ընդ որում, ձեռք բերվող և այլ բնակելի անշարժ գույքերի գրավադրման դեպքում, վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրված անշարժ գույքերի ընդհանուր արժեքի 70%, բ) տրամադրված վարկի ապահովման միջոց հանդիսացող ձեռք բերվող բնակելի տան կամ բնակարանի գրավից բացի վարկառուի կողմից ներկայացվում է նաև երաշխավորություն Հայաստանի Հանրապետության խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված՝ 1-ից 300 տեղերը զբաղեցնող իրավաբանական անձանց կողմից: գ) առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ ձեռքբերվող բնակելի տան կամ բնակարանի արժեքի 30 տոկոսի և վարկառուի կողմից 10 կամ ավելի տոկոսի չափով կատարված կանխավճարի տարբերության չափով ³⁰ :		
9.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	Բանկի կողմից սահմանված տոկոսադրույք 7.5 %, որը չի սուբսիդավորվում	Բանկի կողմից սահմանված տոկոսադրույք 6.9%, որից, 2% սուբսիդավորում, ք. Երևանում բնակելի անշարժ գույքի ձեռքբերման դեպքում 4% սուբսիդավորում, ՀՀ մարզերում բնակելի անշարժ գույքի ձեռքբերման դեպքում:		
		Չի նախատեսվում	Նշված տոկոսադրույք + 0.6%	Բանկի կողմից հաճախորդի փոխարեն կանխավճարի, դժբախտ պատահարներից և գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)	
			Նշված տոկոսադրույք + 0.4%	Բանկի կողմից հաճախորդի փոխարեն դժբախտ պատահարներից և գույքի ապահովագրություն իրականացնելու դեպքում (իրականացվում է վարկի գործողության երկրորդ տարվանից սկսված)	
10.	Վարկի տրամադրման ձև	Միանվագ կամ փուլային:	Միանվագ		
11.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում			

¹⁵ Վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ ընդունվում է անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը:

¹⁶ Ապահովագրության պահանջը դադարում է գործել այն պահից սկսած, երբ վարկի գծով վճարումների արդյունքում Վարկ/Գրավ հարաբերակցությունը հասնում է 70%-ի՝ երկրորդային շուկայից (ոչ անմիջապես կառուցապատողից) գնված բնակարանի դեպքում և 80%-ի՝ առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) գնված բնակարանի դեպքում:

Էջ 10/56-ից

		Վարկավորման պայմաններ և սակագներ	TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.
12.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:	
13.	Վարկի մարման ձևը	Ամբողջությամբ վճարվող անուիտետային կամ մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ. վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով:	
14.	Վարկի ապահովածություն	Ձեռք բերվող բնակելի անշարժ գույքը կամ անշարժ գույքի գնման իրավունքը:	
15.	Ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի առավելագույն արժեք	Ձեռք բերման արժեքը՝ ոչ ավելի, քան 30,000,000 ՀՀ դրամ և միևնույն ժամանակ գնահատված շուկայական արժեքը՝ ոչ ավելի, քան 31 միլիոն ՀՀ դրամը: Ձեռք բերվող անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված արժեքները համեմատվում են ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության կողմից հրապարակվող անշարժ գույքի միջին գների հետ (վերջին հրապարակված տվյալների հետ)՝ հաշվի առնելով բնակարանի մակերեսը և գտնվելու վայրը: Մասնավորապես, բնակարանի մակերեսի և տվյալ տարածքի համար մեկ քառակուսի մետրի միջին արժեքի արտադրյալը չպետք է գերազանցի 31,000,000 ՀՀ դրամը:	Ձեռք բերման արժեքը՝ ոչ ավելի, քան 25,000,000 ՀՀ դրամ և միևնույն ժամանակ գնահատված շուկայական արժեքը՝ ոչ ավելին, քան 26,000,000 ՀՀ դրամ: Ձեռք բերվող անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված արժեքները համեմատվում են ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության կողմից հրապարակվող անշարժ գույքի միջին գների հետ (վերջին հրապարակված տվյալների հետ)՝ հաշվի առնելով բնակարանի մակերեսը և գտնվելու վայրը: Մասնավորապես, բնակարանի մակերեսի և տվյալ տարածքի համար մեկ քառակուսի մետրի միջին արժեքի արտադրյալը չպետք է գերազանցի 26,000,000 ՀՀ դրամը:
16.	Ապահովագրություն	1. Գրավադրված գույքի ապահովագրություն 2. Վարկառուի և համավարկառու/ներ/ի (առկայության դեպքում)՝ դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրության վկայագրերը: Ընդ որում համավարկառու/ներ/ի առկայության դեպքում դժբախտ պատահարից մահացության դեպքի ապահովագրությունը կատարվում է վարկի գումարից վարկառուի և համավարկառու/ներ/ի եկամուտներին համամասն: 3. Վարկի գումարը կարող է կազմել առավելագույնը գրավի արժեքի 90%-ը եթե առկա է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն Վ/Գ գործակցի 70%-ը /80% առաջնային շուկայի համար/ գերազանցող գումարի չափով: Հիփոթեքային պարտավորության ապահովագրությունը պետք է գործի առնվազն մինչև այն պահը, երբ վարկառուն վարկի գումարից կկատարի Վ/Գ գործակցի 70%-ը /80% առաջնային շուկայի համար/ գերազանցող գումարի չափով վճարում:	
17.	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ՝ /գումարը փոխանցվում է վաճառողի հաշվեհամարին/	
18.	Այլ պայմաններ	- Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում Վարկառուն Բանկում մուտքագրում է կանխավճար¹⁷, որը ստեղծվում է մինչև վարկի տրամադրումը: - Առաջնային շուկայից անշարժ գույք ձեռք բերելու դեպքում, որպես կանխավճարը հավաստող փաստաթուղթ, Հաճախորդը կարող է Բանկ ներկայացնել անշարժ գույքի ձեռքբերման տարածամկետ վճարմամբ պայմանագիր:	
19.	Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո:	

3.8. Ավտոմեքենայի ձեռք բերման նպատակով վարկեր

1.	Վարկի տրամադրման նպատակը	Վարկը տրամադրվում է առաջնային կամ երկրորդային շուկաներից անհատական օգտագործման թեթև մարդատար տրանսպորտային միջոց/ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով:		
2.	Ովքեր կարող են դիմել	18 – 65 տարեկան ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:		
3.	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ		
4.	Վարկավորման գումար	4,000,000 - 50,000,000		
5.	Վարկի մարման ժամկետը	- Հաստատուն տոկոսադրույքի դեպքում՝ 36 - 60 ամիս - Լողացող տոկոսադրույքի դեպքում՝ 61 - 84 ամիս		
6.	Վարկի մարման ժամանակացույց	- Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ) - Չսպանակածն (մայր գումարի հավասարաչափ մարումներով վարկ), վճարումները պետք է կատարվեն ամսական կտրվածքով		
7.	Վարկի ձևակերպման վայր	- Ավտոսրահ/համագործակցող կազմակերպություն - Բանկ		
8.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ		Անվանական	Առավելագույն փաստացի
		Առաջնային շուկայից ձեռք բերում	13% - 17%	13.86% - 20.88%
		Երկրորդային շուկայից ձեռք բերում	15% - 19%	16.46% - 21.17%
9.	Տարեկան լողացող տոկոսադրույքի կիրառման պայմաններ	- Լողացող տոկոսադրույքի մեծությունը սահմանվում է հաստատուն բաղադրիչ՝ սկսած 5%-ից + փոփոխուն բաղադրիչ - Լողացող տոկոսադրույքի տատանման առավելագույն և նվազագույն շեմ՝ հաստատված տարեկան տոկոսադրույք $\pm 2\%$ - Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը կսկսի վերանայվել վարկի կնքման պահից 36 ամիս ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթվից սկսած և յուրաքանչյուր 6		

¹⁷ Գույքի ձեռքբերման գնի և վարկի գումարի տարբերության չափով

evocaBANK		Վարկավորման պայմաններ և սակագներ		TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.	
		ամիսը մեկ՝ կիրառելով վերանայման պահին Բանկում գործող (կայքում փաստացի հրապարակված) փոփոխուն բաղադրիչի արժեքը: Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ Երկրորդային շուկայի պարագայում կիրառելի է միայն մինչև 3 տարվա վաղեմություն ունեցող տրանսպորտային միջոցների ձեռք բերման դեպքում			
10.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում			
11.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց վարկի համար՝ օրական 0.015% Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:			
11.	Վարկառուին ներկայացվող պահանջներ	- Վարկի գումարը չի կարող գերազանցել բանկի POS տերմինալների միջոցով իրականացված միջին ամսական գումարային մուտքերի եռապատիկը: - Վարկառուի ընդհանուր ժամկետանց օրերի քանակը վերջին 12 ամսվա ընթացքում չպետք է գերազանցի 30 օրը, ինչպես նաև ընթացքում չպետք է ունենա դասակարգված վարկեր, - Այն դեպքում երբ վարկառուն 12-ից 24 ամիսների ընթացքում ունեցել է հսկվող դասով դասակարգման մեկ դեպք, ապա որոշում կայացնող Լիազոր մարմնի կողմից հայտը կարող է դիտարկվել, եթե՝ - Վճարումների ուշացումը չի գերազանցել 5 օրը, - և կան հիմնավոր փաստարկներ, որ ուշացումները պայմանավորված են եղել ոչ թե ֆինանսական հանգամանքներով, այլ տեխնիկական և սուբյեկտիվ պատճառներով (քարտային գերաճախս, օվերդրաֆտի օգտագործված սահմանաչափի նվազագույն գումարի ոչ ամբողջական մուտքագրման, երկրից բացակայության և այլն), - Վարկառուի՝ գրավով չապահովված վարկերը չպետք է լինեն ավելին, քան հինգը և դրանց գումարային մնացորդը չպետք է գերազանցի 10,000,000 ՀՀ դրամը և/կամ համարժեք արտարժույթը, չներառված տվյալ վարկը: - Հարցման օրվա դրությամբ վարկավորման դիմում-հայտ ներկայացնող հաճախորդը չպետք է ունենա դասակարգված երաշխավորություն, ժամկետանց վարկեր, ինչպես նաև՝ ժամկետանց հարկային պարտավորություններ կամ ԴԱՀԿ արգելանք: - Առնվազն 6 ամսվա POS տերմինալի շրջանառություն «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ով: - POS տերմինալի տեղափոխությունը այլ բանկ հնարավոր է բացառապես տվյալ վարկատեսակի մասով, բանկի հանդեպ ունեցած ամբողջ պարտավորության մարման դեպքում:	
12.	Երաշխավոր անձանց ներկայացվող պահանջներ	- Ֆիզիկական անձ երաշխավորող/ները՝ - ունեն կայուն եկամուտ, որը արտացոլվում է «Նորը տեղեկատվավերլուծական կենտրոն»-ի համակարգում կամ գույքի սեփականատեր են, - վերջին 12 ամսվա ընթացքում չպետք է ունենա դասակարգված վարկեր, իսկ ընդհանուր ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի 30 օրը, - Իրավաբանական անձ երաշխավորներ՝ - Գրանցված գործունեություն է ծավալում առնվազն 12 ամիս և վերջին 12 ամսվա ընթացքում չպետք է ունենա դասակարգված վարկեր, իսկ ընդհանուր ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի 30 օրը, - վերջին 12 ամսում չպետք է ունենա 0-հաշվետվություն կամ գործունեության դադարեցում, - հարցման օրվա դրությամբ չպետք է ունենա դասակարգված երաշխավորություն, ժամկետանց վարկեր, ինչպես նաև՝ ժամկետանց հարկային պարտավորություններ կամ ԴԱՀԿ արգելանք:	
13.	Գանձվող վճարներ	- Վարկային հաշվի սպասարկման վճար - վարկի գումարի 1%-ի չափով, նվազագույնը 20,000 ՀՀ դրամ: - Վարկի գումարը կանխիկ ստանալու դեպքում գանձվում է բանկային հաշվից կանխիկացման վճար՝ ըստ գործող սակագների:	
14.	Ժամկետից շուտ մարելու տուգանք	Չի գանձվում	
15.	Վերլուծություն	Պարզեցված բիզնես վերլուծություն	
16.	Այլ պայմաններ	Եթե վարկը հաստատվում է որևէ նախապայմանով (գործող այլ վարկային պարտավորությունների մասնակի կամ ամբողջական մարում, հարկային պարտավորությունների մարում և այլն), ապա վարկի տրամադրումը կատարվում է կամ փուլային կամ միանվագ տրամադրման տարբերակով՝ տրամադրման պահին նախապայմանի կատարման ամբողջական վերահսկողությամբ: Նախապայմանի կատարման և վերահսկման պատասխանատու են հանդիսանում, համապատասխանաբար՝ հայտը կազմող Վարկային մասնագետը և վարկը տրամադրող տարածքային կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը:	

	Վարկավորման պայմաններ և սակագներ	TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.
		- Եթե հաճախորդը ունի գործող POS տերմինալի շրջանառության հիման վրա բիզնես վարկ, կարող է դիմել 2-րդ վարկին, չխախտելով վարկատեսակով նախատեսված առավելագույն շեմը՝ 10.0 մլն. ՀՀ դրամ: - Տվյալ վարկատեսակով գործող հաճախորդների դեպքում նույն վարկատեսակով նոր հայտ քննարկելիս, Լիազոր մարմինը կարող է հաստատել հայտը նախապայմանով՝ գործող պարտավորության մնացորդի մարման (անձնական միջոցներով կամ նոր վարկի հաշվին), եթե հաճախորդը համապատասխանում է վարկավորման չափանիշներին և կատարել է պայմանագրային գումարի 50% և ավել մարում: Տվյալ դեպքում վարկը չի դիտարկվում վերաֆինանսավորված/վերաձևակերպված:

4.18. **Բիզնես Օվերդրաֆտ POS տերմինալի շրջանառության հիման վրա**

1.	Արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո	
2.	Վարկառուները	ՀՀ ռեզիդենտ իրավաբանական և անհատ ձեռնարկատեր անձինք, ովքեր գրանցված գործունեություն են ծավալում առնվազն 12 ամիս: Այն հաճախորդները ովքեր Էվոկաբանկ ԲԲԸ-ի հետ ունեն կնքված POS տերմինալի համագործակցության պայմանագիր առնվազն 6 ամիս վաղեմության	
3.	Սահմանաչափերը	1,000,000 – 10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	
4.	Սահմանաչափի տեսակ	Վերականգնվող սահմանաչափ՝ ամսական նվազագույն մարման պահանջով	
5.	Ամսական նվազագույն մարման պահանջ	Վարկառուն պարտավորվում է վճարել նախորդ ամսվա ընթացքում օգտագործված սահմանաչափի 10%-ը /նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ/+կուտակված % մինչև քաղվածում նշված վերջնաժամկետը: Ամիս է սահմանվում յուրաքանչյուր ամսվա 1-ից մինչև հաջորդ ամսվա 1-ը ընկած ժամանակահատվածը:	
6.	Տրամադրման եղանակը	անկանխիկ	
7.	Մարման ժամկետը	6-12 ամիս /առանց վաղաժամ մարման տուգանքի/	
8.	Տոկոսադրույքը /տարեկան/ Չօգտագործված մասի նկատմամբ տոկոսադրույք	ՀՀ դրամ	14.5-16%
		ԱՄՆ դոլար	11.5-13%
		Եվրո	9-10%
		0-0.5%	
		Տոկոսադրույքների միջակայքում հաստատվող տոկոսները, կապված են , եթե ապահովում են կամ ըստ գնահատման, կարող են տարեկան կտրվածքով ապահովել 1 մլն. ՀՀ դրամ կամ ավել ոչ տոկոսային եկամուտներ:	
9.	Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	- Ժամկետանց վարկի դեպքում՝ օրական 0.015%-ի չափով - Ժամկետանց տոկոսագումարների դեպքում՝ օրական 0.1%-ի չափով	
10.	Քաղվածքի օր՝	Յուրաքանչյուր ամսվա 1—ը	
11.	Վճարման ժամկետ՝ սկսած քաղվածքի օրվանից՝	15 օր (Վերջնաժամկետ է համարվում յուրաքանչյուր ամսվա 16-ը)	
12.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոցներ	- POS տերմինալի շրջանառություն - Անհրաժեշտության դեպքում ֆիզիկական և/կամ իրավաբանական անձ/անց/ երաշխավորություն	
13.	Վարկառուին ներկայացվող պահանջներ	- Վարկի գումարը չի կարող գերազանցել բանկի POS տերմինալների միջոցով իրականացված միջին ամսական գումարային մուտքերի եռապատիկը: - Վարկառուի ընդհանուր ժամկետանց օրերի քանակը վերջին 12 ամսվա ընթացքում չպետք է գերազանցի 30 օրը, ինչպես նաև ընթացքում չպետք է ունենա դասակարգված վարկեր, - Այն դեպքում երբ վարկառուն 12-ից 24 ամիսների ընթացքում ունեցել է հսկվող դասով դասակարգման մեկ դեպք, ապա որոշում կայացնող Լիազոր մարմնի կողմից հայտը կարող է դիտարկվել, եթե՝ - Վճարումների ուշացումը չի գերազանցել 5 օրը, - և կան հիմնավոր փաստարկներ, որ ուշացումները պայմանավորված են եղել ոչ թե ֆինանսական հանգամանքներով, այլ տեխնիկական և սուբյեկտիվ պատճառներով (քարտային գերաժախս, օվերդրաֆտի օգտագործված սահմանաչափի նվազագույն գումարի ոչ ամբողջական մուտքագրման, երկրից բացակայության և այլն), - Վարկառուի՝ գրավով չապահովված վարկերը չպետք է լինեն ավելին, քան հինգը և դրանց գումարային մնացորդը չպետք է գերազանցի 10,000,000 ՀՀ դրամը և/կամ համարժեք արտարժույթը, չներառված տվյալ վարկը: - Հարցման օրվա դրությամբ վարկավորման դիմում-հայտ ներկայացնող կազմակերպությունը չպետք է ունենա դասակարգված երաշխավորություն, ժամկետանց վարկեր, ինչպես նաև՝ ժամկետանց հարկային պարտավորություններ կամ ԴԱՀԿ արգելանք: - Առնվազն 6 ամսվա POS տերմինալի շրջանառություն «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ով: - POS տերմինալի տեղափոխությունը այլ բանկ հնարավոր է բացառապես տվյալ վարկատեսակի մասով, բանկի հանդեպ ունեցած ամբողջ պարտավորության մարման դեպքում:	
14.	Երաշխավոր անձանց ներկայացվող պահանջներ	- Ֆիզիկական անձ երաշխավորող՝ - ունեն կայուն եկամուտ, որը արտացոլվում է «Նորք տեղեկատվաբերլուծական կենտրոն»-ի համակարգում կամ գույքի սեփականատեր են, - վերջին 12 ամսվա ընթացքում չպետք է ունենա դասակարգված վարկեր, իսկ ընդհանուր ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի 30 օրը,	

		- Իրավաբանական անձ երաշխավորներ՝ - Գրանցված գործունեություն է ծավալում առնվազն 12 ամիս և վերջին 12 ամսվա ընթացքում չպետք է ունենա դատակարգված վարկեր, իսկ ընդհանուր ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի 30 օրը, - վերջին 12 ամսում չպետք թ ունենա 0-հաշվետվություն կամ գործունեության դադարեցում, - հարցման օրվա դրությամբ չպետք է ունենա դատակարգված երաշխավորություն, ժամկետանց վարկեր, ինչպես նաև՝ ժամկետանց հարկային պարտավորություններ կամ ԴԱՀԿ արգելանք:
15.	Գանձվող վճարներ	- Վարկային հաշվի սպասարկման վճար - վարկի գումարի 1%-ի չափով, նվազագույնը 20,000 ՀՀ դրամ: - Վարկի գումարը կանխիկ ստանալու դեպքում գանձվում է բանկային հաշվից կանխիկացման վճար՝ ըստ գործող սակագների:
16.	Ժամկետից շուտ մարելու տուգանք	Չի գանձվում
17.	Վերլուծություն	Պարզեցված բիզնես վերլուծություն
18.	Այլ պայմաններ	- Եթե վարկը հաստատվում է որևէ նախապայմանով (գործող այլ վարկային պարտավորությունների մասնակի կամ ամբողջական մարում, հարկային պարտավորությունների մարում և այլն), ապա վարկի տրամադրումը կատարվում է կամ փուլային կամ միանվագ տրամադրման տարբերակով՝ տրամադրման պահին նախապայմանի կատարման ամբողջական վերահսկողությամբ: Նախապայմանի կատարման և վերահսկման պատասխանատու են հանդիսանում, համապատասխանաբար՝ հայտը կազմող Վարկային մասնագետը և վարկը տրամադրող տարածքային կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը: - Եթե հաճախորդը ունի գործող POS տերմինալի շրջանառության հիման վրա բիզնես վարկ, կարող է դիմել 2-րդ վարկին, չխախտելով վարկատեսակով նախատեսված առավելագույն շեմը՝ 10.0 մլն. ՀՀ դրամ: - Տվյալ վարկատեսակով գործող հաճախորդների դեպքում նույն վարկատեսակով նոր հայտ քննարկելիս, Լիազոր մարմինը կարող է հաստատել հայտը նախապայմանով՝ գործող պարտավորության մնացորդի մարման (անձնական միջոցներով կամ նոր վարկի հաշվին), եթե հաճախորդը համապատասխանում է վարկավորման չափանիշներին և կատարել է պայմանագրային գումարի 50% և ավել մարում: Տվյալ դեպքում վարկը չի դիտարկվում վերաֆինանսավորված/վերաձևակերպված:

4.19. «Եվրոպական ներդրումային բանկի կողմից ֆինանսավորվող» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի պայմաններ

1.	Արժույթը	ՀՀ դրամ
2.	Վարկառուները	- Հայաստանի ռեզիդենտ իրավաբանական և անհատ ձեռնարկատեր անձիք՝ - ՓՄՁ-ներ (աշխատակիցների քանակը չի գերազանցում 250): - Միջին կապիտալիզացիայի կազմակերպություններ (աշխատակիցների քանակը 250-ից 3000): - Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:
3.	Նպատակը	Ֆինանսավորման ոլորտներն են՝ - Գյուղատնտեսություն, Գյուղ վերամշակում - Հրուսաշրջություն - Արտադրություն - Այլ ներդրումներ, որոնք համապատասխանում են ծրագրի պահանջներին: Վերո նշված ոլորտների թիրախային ուղղություններն են՝ - Էներգոարդյունավետության բարձրացում - Կանանց ձեռներեցություն - Մարզային զարգացման խթանում - Թվայնացմանն ու ավտոմատացմանն ուղղված ենթակառուցվածքային ծրագրեր
4.	Սահմանաչափերը	Գրավի դիմաց՝ 5,000,001 – 500,000,000 ՀՀ դրամ Առանց գրավի (նվազագույնը մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորությամբ)՝ 1,000,000 – 5,000,000 ՀՀ դրամ
5.	Եղանակը	անկանխիկ
6.	Մարման ժամկետը	24 - 90 ամիս
7.	Վարկի մայր գումարի արտոնյալ ժամկետ	Կարող է տրամադրվել մինչև 30 ամիս տևողությամբ
8.	Տարեկան անվանական տոկոսադրույքը	10.5%
9.	Գրավը	- Անշարժ և շարժական գույքը, - Ավանդային կամ ընթացիկ հաշիվների դրամական միջոցները, - Ոսկու ստանդարտացված ձուլակտորները կամ ջարդոնը, - Պետական կարճաժամկետ պարտատոմսերը կամ այլ արժեթղթերը: - Անհրաժեշտության դեպքում՝ այլ գրավների առկայության պարագայում կարող են գրավ ընդունվել նաև շրջանառու միջոցները և պատրաստի արտադրանքը (հաշվի առնելով այլ գրավների իրացվելիության աստիճանը կամ վարկ/գրավ հարաբերակցության չափը, վարկավորման ժամկետը, հաճախորդի բնութագիրը և այլն):

		Վարկավորման պայմաններ և սակագներ	TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.
		• Լրացուցիչ պայման - Բիզնեսի հիմնադիրների/իրական շահառուների անձնական երաշխավորությունների առկայությունը պարտադիր է, ինչպես նաև որպես լրացուցիչ ապահովում Բանկը կարող է պահանջել նաև այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն:	
10.	Վարկ/գրավ ընդունելի սահմանաչափերը	• Անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների դեպքում՝ գնահատված արժեքի մինչև 70%-ի չափով: • Պետական կարճաժամկետ պարտատոմսերի դեպքում՝ անվանական արժեքի մինչև 95%-ի չափով: • Այլ արժեթղթերի դեպքում՝ գնահատված արժեքի մինչև 70%-ի չափով: • Ոսկու ստանդարտացված ծուլակտորների և թանկարժեք մետաղների ջարդոնի դիմաց՝ գնահատված արժեքի մինչև 95%-ի չափով: • Դրամական միջոցների (ավանդային և ընթացիկ հաշվի դեպքում)՝ մինչև 90%-ի չափով: • Շրջանառու միջոցների դեպքում՝ գնահատված արժեքի մինչև 50%-ի չափով:	
11.	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության	
12.	Պահանջներ միայն երաշխավորությամբ տրամադրվող վարկերի նկատմամբ	• Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով դասակարգումների բացակայություն, իսկ մարումների գծով ուշացման օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը: • Վարկառուի՝ գրավով չապահովված վարկերը /առանց ակնկալվող վարկի/ չպետք է լինեն ավելին, քան հինգը և դրանց գումարային մնացորդը չպետք է գերազանցի 5,000,000 ՀՀ դրամը և/կամ համարժեք արտարժույթը,	
13.	Մոնիտորինգ	• Նպատակային մոնիտորինգ – տրամադրումից հետո 1-ից 2 ամսվա ընթացքում: • Ֆինանսական մոնիտորինգ – տարեկան առնվազն մեկ անգամ: Ֆինանսական մոնիտորինգի հաշվետվությունը պետք է առնվազն արտացոլի վարկառուի ընթացիկ և նախկին ֆինանսական վիճակների համեմատությունը:	
14.	Պահանջներ վարկառուի և երաշխավոր անձանց նկատմամբ	• ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ: • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով): • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով դասակարգումների բացակայություն, իսկ մարումների գծով ուշացման օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:	
15.	Վարկի գումարը պայմանագրով ամրագրված ժամանակացույցից շուտ մարելու համար վճարվող տուգանք	Տուգանք չի կիրառվում	
16.	Գանձվող վճարներ	• Վարկային հայտի ուսումնասիրման վճար – 0 • Վարկային հաշվի սպասարկման վճար – վարկի գումարի 0.5%-ի չափով, բայց ոչ պակաս, քան 20,000 ՀՀ դրամ, առավելագույնը 50,000 ՀՀ դրամ: • Վարկի գումարը կանխիկ ստանալու դեպքում – գանձում ենք բանկային հաշվից կանխիկացման վճար՝ ըստ Բանկի գործող սակագների:	
17.	Պետական տուրքեր և այլ ծախսեր	• ՀՀ պետական իրավասու մարմիններում վճարվող պետտուրք՝ գրավի պայմանագրի վավերացման և գրանցման համար: • Գրավադրվող արժեքների գնահատման ծառայության արժեքը՝ Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպությունների սահմանած սակագների համաձայն:	
18.	Լրացուցիչ պայմաններ	• Գործող վարկերի վերաֆինանսավորման հնարավորություն ծրագրով նախատեսված չէ	

4.20. «Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի» հետ համագործակցության շրջանակներում տրամադրվող վարկեր

1.	Արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ	
2.	Վարկատեսակ	Առևտրային վարկ և լիզինգ	
3.	Վարկառուները	• Հայաստանի ռեզիդենտ իրավաբանական և անհատ ձեռնարկատեր անձիք: • Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:	
4.	Նպատակը	• Էներգաարդյունավետ սարքավորումների և մեքենաների ձեռքբերում, ենթակառուցվածքների կառուցում և այլ նախագծեր, որոնք օգտագործում են վերականգնվող էներգիայի աղբյուրներ • Ծրագիրն ուղղված չէ տնտեսության որևէ կոնկրետ ճյուղի կամ ոլորտի (ոլորտների) վարկերի վերաֆինանսավորմանը: Այն պետք է ծառայի տնտեսության ամենատարբեր ճյուղերում բիզնեսի ընթացիկ կարիքների (շրջանառու միջոցները) և ներդրումների ֆինանսավորմանը (մեքենաներ, սարքավորումներ, ձեռնարկությունների շինություններ և այլն), կապիտալ ներդրումների և բիզնես գործունեության այլ նպատակների համար (1 հաճախորդին տրամադրվող առավելագույն վարկի գումարը չի կարող գերազանցել 500,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը և/կամ արտարժույթը)	
5.	Սահմանաչափերը	Առանց գրավի	1,000,000 – 5,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ (նվազագույնը մեկ ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորությամբ)
		Գրավի դիմաց	5,000,001 – 1,000,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
6.	Տրամադրման Եղանակը	անկանխիկ	
7.	Մարման ժամկետը	մինչև 5 տարի	
8.	Տարեկան անվանական տոկոսադրույքը	ՀՀ դրամ	12%-16%
		ԱՄՆ դոլար	8%-13%
		ԵՎՐՈ	6%-10%
9.	Գրավի առարկա	• Անշարժ և շարժական գույքը, • Ավանդային կամ ընթացիկ հաշիվների դրամական միջոցները,	

		- Ոսկու ստանդարտացված ձուլակտորները կամ ջարդոնը, - Պետական կարճաժամկետ պարտատոմսերը կամ այլ արժեթղթերը: - Անհրաժեշտության դեպքում՝ այլ գրավների առկայության պարագայում կարող են գրավ ընդունվել նաև շրջանառու միջոցները և պատրաստի արտադրանքը (հաշվի առնելով այլ գրավների իրացվելիության աստիճանը կամ վարկ/գրավ հարաբերակցության չափը, վարկավորման ժամկետը, հաճախորդի բնութագիրը և այլն): - Որպես լրացուցիչ ապահովում Բանկը կարող է պահանջել նաև այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն: - Բանկի Վարկային քաղաքականությամբ սահմանված գրավի այլ տեսակներ
10.	Վարկ/գրավ ընդունելի սահմանաչափերը	- Անշարժ գույքի և այլ հիմնական միջոցների դեպքում՝ գնահատված արժեքի մինչև 70%-ի չափով: - Պետական կարճաժամկետ պարտատոմսերի դեպքում՝ անվանական արժեքի մինչև 95%-ի չափով: - Այլ արժեթղթերի դեպքում՝ գնահատված արժեքի մինչև 70%-ի չափով: - Ոսկու ստանդարտացված ձուլակտորների և թանկարժեք մետաղների ջարդոնի դիմաց՝ գնահատված արժեքի մինչև 95%-ի չափով: - Դրամական միջոցների (ավանդային և ընթացիկ հաշվի դեպքում)՝ մինչև 100%-ի չափով: - Շրջանառու միջոցների դեպքում՝ գնահատված արժեքի մինչև 50%-ի չափով:
11.	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության
12.	Պահանջներ երաշխավոր անձանց նկատմամբ	- ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ: - Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով): - Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով դատակարգումների բացակայություն, իսկ մարումների գծով ուշացման օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:
13.	Գանձվող վճարներ	- Վարկային հայտի ուսումնասիրման վճար - 0 դրամ է: - Վարկի սպասարկման վճար - - 0 դրամ, - Կանխիկացման վճար - գանձում ենք բանկային հաշվից կանխիկացման վճար՝ ըստ Բանկի գործող սակագների:
14.	Պետական տուրքեր և այլ ծախսեր	- ՀՀ պետական իրավասու մարմիններում վճարվող պետությունը՝ գրավի պայմանագրի վավերացման և գրանցման համար: - Գրավադրվող արժեքների գնահատման ծառայության արժեքը՝ Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպությունների սահմանած սակագների համաձայն:

5. Բանկային երաշխիքներ

1.	Արժույթ	ՀՀ դրամ կամ արտարժույթ
2.	Գումարային սահմանաչափ	Ֆիզիկական անձանց տրամադրվող երաշխիքների դեպքում մինչև 10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ: իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող երաշխիքների դեպքում մինչև 500,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ:
3.	Ժամկետներ	Ֆիզիկական անձանց տրամադրվող երաշխիքների դեպքում մինչև 2 տարի մարման ժամկետով: իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող երաշխիքների դեպքում մինչև 3 տարի մարման ժամկետով:
4.	Տարեկան անվանական տոկոսադրույքներ	1-4% տարեկան
5.	Ժամկետանց տոկոսագումարների տույժեր	օրական 0.3%-ի չափով
6.	Գանձվող վճարներ	- Ֆիզիկական անձանց տրամադրված երաշխիքների դեպքում, եթե գանձման ենթակա տոկոսագումարը տրամադրվող երաշխիքի գործողության փաստացի կամ ամբողջ ժամանակահատվածի համար չի գերազանցում 10,000 ՀՀ դրամը, ապա Պրինցիպալից գանձվում է միանվագ վճար 10,000 ՀՀ դրամ գումարի չափով: - Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրված երաշխիքների դեպքում, եթե գանձման ենթակա տոկոսագումարը տրամադրվող երաշխիքի գործողության փաստացի կամ ամբողջ ժամանակահատվածի համար չի գերազանցում 20,000 ՀՀ դրամը, ապա Պրինցիպալից գանձվում է միանվագ վճար 20,000 ՀՀ դրամ գումարի չափով:

6. Ֆակտորինգային ֆինանսավորում

1.	Ֆակտորինգի սահմանաչափ	5,000,000 -1,000,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
2.	Հաճախորդները	ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատեր, ովքեր գրանցված գործունեություն են ծավալում առնվազն 12 ամիս:
3.	Ֆակտորինգային սահմանաչափի գործողության ժամկետ	Մինչև 24 ամիս
4.	Ֆինանսավորման ժամկետ	- Մինչև 120 օր, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱԲԲԸ-ի հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում - մինչև 250 օր,

5.	Ֆինանսավորման չափ	Ներկայացված հաշիվ ապրանքագրի մինչև 90%	
6.	Ֆինանսավորման գումարի տարեկան տոկոսադրույք և արժույթ	ՀՀ դրամ	սկսած 12%-ից
		ԱՄՆ դոլար	սկսած 8%-ից
		Եվրո	սկսած 6%-ից
		ՌԴ ռուբլի	Սկսած 12%-ից
7.	Ֆինանսավորման գումարի և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	Ժամկետանց գումարի համար՝ օրական 0.015%, Ժամկետանց տոկոսագումարի համար օրական 0.1%:	
8.	Վաղաժամկետ մարում	Վաղաժամկետ մարման տուժանքներ չեն կիրառվում	
9.	Սահմանաչափի հաստատման վճար	Սահմանաչափի 0.20% նվազագույնը 10,000 ՀՀ դրամ առավելագույնը 200,000 ՀՀ դրամ	
10.	Գործող սահմանաչափի ավելացում	ավելացվող մասի 0.20% առավելագույնը 10,000 ՀՀ դրամ	
11.	Հ/Ա գանձվող միջնորդավճար	0.5-3%, min 10,000 դրամ	
12.	Սահմանաչափի վերահաստատում	10,000 ՀՀ դրամ	
13.	Հայտի ուսումնասիրման վճար	10,000 ՀՀ դրամ	
14.	Ապահովվածություն	Հաճախորդի/պարտապանների անձնական երաշխավորություններ՝ ըստ պահանջի, Առանձին դեպքերում, բարձր ռիսկայնությամբ գործարքների դեպքում կարող է պահանջվել նաև լրացուցիչ գրավ	
15.	Ֆակտորինգի մարում	Ֆակտորինգի մայր գումարի և տոկոսագումարի մարումները կատարվում են ամբողջությամբ ժամկետի վերջում	

7. Լիզինգ

1.	Արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
2.	Լիզինգառուները	ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր
3.	Լիզինգի առարկայի ձեռքբերման հնարավորությունները	Լիզինգի առարկան կարող է ձեռք բերվել ինչպես ՀՀ-ից, այնպես էլ արտերկրից՝ առաջնային և երկրորդային շուկաներից
4.	Լիզինգի սահմանաչափերը	5,000,001-1,000,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ
5.	Կանխավճար	Նվազագույնը՝ 10%
6.	Մարման ժամկետը	6-72 ամիս՝ կախված ձեռքբերվող Լիզինգի առարկայից
7.	Մարման եղանակը	«Անուիտետային» «Ջսպանակաձև» - Պայմանագրային
8.	Տարեկան տոկոսադրույքը	ՀՀ դրամ՝ սկսած 10.5%-ից, ԱՄՆ դոլար՝ սկսած 8%-ից, Եվրո՝ սկսած 6%-ից,
9.	Լիզինգի մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	- Ժամկետանց լիզինգի մայր գումարի դեպքում՝ օրական 0.015%-ի չափով - Ժամկետանց տոկոսագումարների դեպքում՝ օրական 0.1%-ի չափով
10.	Ժամկետից շուտ մարելու տուգանք	- Մինչև պայմանագրի գործողության ժամկետի կեսը մարումների ժամանակացույցով սահմանված ամսական վարձավճարից ավելին մարելու դեպքում վճարում է տուգանք՝ մարումների ժամանակացույցով սահմանված ամսական Լիզինգի մայր գումարի չափը գերազանցող գումարի 5%-ի չափով: - Առանձին դեպքերում Բանկի լիազոր մարմնի որոշմամբ սահմանված տուգանքի չափը կարող է փոփոխվել:
11.	Ապահովվածություն	- Երաշխավորություններ՝ ըստ պահանջի, - Գույքի/իրավունքի գրավ՝ ըստ պահանջի - Առանձին դեպքերում, բարձր ռիսկայնությամբ գործարքների դեպքում կարող է պահանջվել նաև այլ գրավ
12.	Գանձվող վճարներ	- Լիզինգային հայտի ուսումնասիրման միանվագ վճար՝ 20,000 ՀՀ դրամ - Լիզինգի գումարից միանվագ գանձվող միջնորդավճար՝ 0.4-1% բայց ոչ ավել քան 500 000 ՀՀ դրամ
13.	Սեփականության իրավունքի փոխանցման վճար՝ յուրաքանչյուր պայմանագրի մասով անկախ դրա գույքերի քանակից	10,000 ՀՀ դրամ
14.	Լիզինգի պայմանների վերանայում	15,000 ՀՀ դրամ
15.	Ենթավարձակալությամբ տրամադրելու համաձայնություն	50,000 ՀՀ դրամ
16.	Լիզինգի առարկայի տարեկան ապահովագրություն	Լիզինգի տրամադրման ժամանակ՝ լիզինգի առարկայի ինքնարժեքի չափով, մնացած տարիների համար՝ լիզինգի մնացորդային արժեքի վրա:

1.1. Լիզինգ՝ տնտեսության արդիականացման նպատակային ծրագրի շրջանակում (Գործում է մինչև 2025թ.-ի դեկտեմբերի 31-ը)

1.	Արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար կամ Եվրո
2.	Լիզինգառուները	ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատեր
3.	Նպատակը	Նոր (չօգտագործված) սարքերի և սարքավորումների գնում կամ ներմուծում, որոնք օգտագործվելու են Հայաստանի Հանրապետության տարածքում
4.	Սուբսիդավորվող ոլորտները	- Մշակող արդյունաբերություն - Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում

 Վարկավորման պայմաններ և սակագներ TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.		- Տեղեկատվություն և կապ - Շինարարություն - Փոխադրում և պահեստային տնտեսություն - Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն - Կրթություն - Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում - Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում - Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում - Կացության կազմակերպում (բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններում կացության կազմակերպման գործունեություն իրականացնող տնտեսավարողների) - Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն	
5.	Առավելագույն գումար	Մեկ տնտեսավարողի գծով առավելագույն գումարը 1 մլրդ ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ /2021թ.-ին և դրանից հետո կանոնադրական կապիտալում առնվազն 200 մլն ՀՀ դրամ ներդրում կատարելու դեպքում սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը սահմանվում է կանոնադրական կապիտալում կատարված ներդրման հնգապատիկի չափով, բայց ոչ ավելի, քան 10 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկավորման դեպքում՝ 5 մլրդ դրամին համարժեք/: Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում և Արտադրողականության խորհրդատվություն՝ 400 մլն դրամ կամ համարժեք արտարժույթ (պայմանագրի ստորագրման պահի փոխարժեքով)	
6.	Նախավճարի չափ	Լիզինգի պայմանագրի շրջանակներում լիզինգի առարկայի ձեռքբերման համար ֆինանսական կազմակերպությունների կողմից վճարված գումարների (արտարժույթի դեպքում՝ համարժեք դրամի) և լիզինգատուի կողմից որպես կանխավճար վճարված գումարների դրական տարբերության վրա՝ սկսած վերոնշյալ գումարների վճարման օրվանից մինչև լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտերի ստորագրման օրը հաշվարկվում է տոկոս, որը չի կարող գերազանցել լիզինգի՝ պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքը	
7.	Մարման ժամկետը	մինչև 120 ամիս	
8.	Սուբսիդավորման ժամանակահատված	Մինչև 42 ամիս Նախավճարը սուբսիդավորվում է մեքենասարքավորման և դրա բաղկացուցիչ մասի հանձնման/ընդունման ակտի ստորագրումից հետո միանվագ՝ ծրագրով սահմանված ընթացակարգով: Ընդ որում, մատակարարման փուլի սուբսիդավորումը կատարվում է մինչև 180 օր ժամկետի համար՝ սկսած լիզինգի պայմանագրի կնքման օրվանից, իսկ 180 օր ժամկետը գերազանցող ժամկետի համար տոկոսների վճարման պարտականությունը կրում է Լիզինգատուն	
9.	Մարման եղանակը	«Անուիտետային» «Հսպանակաձև» - Պայմանագրային	
10.	Արտոնյալ ժամանակաշրջան	Մայր գումարի արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 6 ամիս	
11.	Տարեկան տոկոսադրույքը	Փաստացի տոկոսադրույքը համաձայն Բանկի գործող սակագների Սուբսիդավորվող չափը՝ ՀՀ դրամի դեպքում՝ 10%, Արտարժույթի դեպքում՝ 8%	
12.	Լիզինգի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր	- Ժամկետանց լիզինգի դեպքում՝ օրական 0.015%-ի չափով - Ժամկետանց տոկոսագումարների դեպքում՝ օրական 0.1%-ի չափով	
13.	Ժամկետից շուտ մարելու տուգանք	Չի կիրառվում	
14.	Գանձվող միջնորդավճարներ, սպասարկման այլ վճարներ	Չի կիրառվում	

8. Աշխատավարձային նախագծերի և դրանց շրջանակներում տրամադրվող վարկային սահմանաչափի միասնական պայմաններ

1.	Քարտի տեսակ և սպասարկման վճար	Ղեկավարներ	Visa Gold / MasterCard Gold	Համաձայն համագործակցության պայմանագրի
		Այլ աշխատակիցներ	ARCA	Համաձայն համագործակցության պայմանագրի
			Visa Classic/ Visa Vision/ MasterCard Standart	Համաձայն համագործակցության պայմանագրի
2.	Քարտի տրամադրման վճար	անվճար		
3.	Կանխիկացման վճար բանկի կանխիկացման կետերից կանխիկացման դեպքում	Համաձայն համագործակցության պայմանագրի		
4.	Կանխիկացման վճար ARCA համակարգի անդամ այլ բանկերի կանխիկացման կետերից կանխիկացման դեպքում	Համաձայն Բանկում գործող սակագների		
5.	Անկանխիկ գործարքներ	Համաձայն համագործակցության պայմանագրի		
6.	Վարկային սահմանաչափի տրամադրում	Ղեկավարներ	Մինչև աշխատավարձի տասնապատիկ, առավելագույնը 10,000,000 ՀՀ դրամ	
		Այլ աշխատակիցներ	Մինչև աշխատավարձի ութապատիկ, առավելագույնը 5,000,000 ՀՀ դրամ	

		Վարկավորման պայմաններ և սակագներ	TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.
7.	Արժույթը	<< դրամ	
8.	Արտոնյալ ժամանակահատված	Համաձայն համագործակցության պայմանագրի	
9.	Մարման ժամկետ	12-36 ամիս	
10.	Ամսական նվազագույն մարման պահանջ	Համաձայն համագործակցության պայմանագրի	
11.	Վարկային սահմանաչափի անվանական տոկոսադրույք	Համաձայն համագործակցության պայմանագրի	
12.	Սահմանաչափի տեսակ	- Վերականգնվող՝ ամսական նվազագույն մարման պահանջով - Մարման սահմանված ժամանակացույցով	
13.	Սահմանաչափի տրամադրման եղանակ	Վարկային սահմանաչափը տրամադրվում է Բանկի վճարային քարտերի միջոցով:	
14.	Քաղվածքի օր՝	Մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը	
15.	Վճարման վերջնաժամկետ	Յուրաքանչյուր ամսվա 16-ը (եթե տվյալ ամսվա 16-ը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, ապա վերջնաժամկետ է համարվում հաջորդ աշխատանքային օրը):	
16.	Տոյժեր՝	Ամսական նվազագույն վճարը վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.015% օրական Հաշվեգրված տոկոսները վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.1% օրական	
17.	Վարկունակության գնահատում /վարկի հաստատման պայմաններ/	Վարկի տրամադրման անհրաժեշտ պայման է հանդիսանում 1. Լինել կազմակերպության 3 ամսվա աշխատող Բանկի քարտով ստանալ նվազագույնը մեկ ամսվա աշխատավարձ 2. Վերջին 12 ամսում հսկվող և ավելի խիստ դասով դասկարգված վարկերի բացակայությունը, հայտի ներկայացման պահին ժամկետանց կամ դասակարգված վարկերի բացակայությունը (ներառյալ երաշխավորությունները), վերջին 12 ամսում ժամկետանց օրերի թիվը չի գերազանցում 30 օրը: 3. Վարկի տրամադրման անհրաժեշտ պայման է հանդիսանում (վարկային պատմության առկայության դեպքում) վերջին 24 ամսում անհուսալի դասով դասկարգված վարկերի բացակայությունը: 4. Եթե ակնկալվող վարկային սահմանաչափը գերազանցում է 5 մլն. << դրամը և հայտատուի գործող անգրավ վարկերի ընդհանուր մնացորդը գերազանցում է 5 մլն. << դրամը, ապա հաշվարկվում է OTI գործակիցը, որը չպետք է գերազանցի 100%-ը: 5. Եթե ակնկալվող վարկային սահմանաչափը գերազանցում է 5 մլն. << դրամը և հայտատուի գործող անգրավ վարկերի ընդհանուր մնացորդը գերազանցում է 5 մլն. << դրամը, ապա հաշվարկվում է OTI գործակիցը, որը չպետք է գերազանցի 100%-ը:	
18.	Տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:	
19.	Հեռակառավարման՝ «EvocaTouch» և «EvocaOnline» համակարգերի տրամադրում	անվճար	

9. Ավանդի գրավով ապահովված վարկային սահմանաչափ

1.	Ովքեր կարող են դիմել	Բանկի հաճախորդներ	
2.	Սահմանաչափ	<< դրամով ներդրված ժամկետային ավանդի պայմանագրի գումարի մինչև 95% - Այլ արժույթներով ներդրված ժամկետային ավանդի պայմանագրի գումարի մինչև 80%	
3.	Սահմանաչափի տեսակ	Վերականգնվող կամ նվազող սահմանաչափով օվերդրաֆտ	Մարման գրաֆիկով վարկ
4.	Մարման ձևը	Վարկառուն պարտավորվում է վճարել կուտակված տոկոսագումարը մինչև քաղվածում նշված վերջնաժամկետը:	«Անուիտետային» «Հսպանակաձև» «Միանգամյա»
5.	Մարման ժամկետ	Առավելագույնը մինչև Բանկում գործող ժամկետային ավանդի պայմանագրի ժամկետի ավարտը	
6.	Արժույթ	<< դրամ	
7.	Անվանական տոկոսադրույք	<< դրամով ներդրված ժամկետային ավանդի դեպքում	Ներդրված ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույք գումարած 2%
		Այլ արժույթներով ներդրված ժամկետային ավանդների դեպքում	<< դրամի գծով Բանկում սահմանված ժամկետային ավանդի տարեկան առավելագույն տոկոսադրույք գումարած 2%
8.	Սահմանաչափի տրամադրման եղանակ	Անկանխիկ, օվերդրաֆտի դեպքում՝ Բանկի վճարային քարտերի միջոցով	
9.	Օվերդրաֆտի դեպքում		
	Քաղվածքի օր	Մինչև յուրաքանչյուր ամսվա 10 - ը	
	Վճարման վերջնաժամկետ	Յուրաքանչյուր ամսվա 16-ը (եթե տվյալ ամսվա 16-ը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, ապա վերջնաժամկետ է համարվում հաջորդ աշխատանքային օրը):	
	Արտոնյալ ժամանակահատված	Չի տրամադրվում	
10.	Վարկի վերադարձելիության ապահովման միջոց	Բանկում ներդրված ժամկետային ավանդի պայմանագիր: Ընդ որում, գրավադրվող ժամկետային ավանդի պայմանագրի և ակնկալվող վարկի գումարի տարբեր արժույթներ լինելու դեպքում, հաշվարկի համար հիմք է ընդունվում տվյալ օրվա դրությամբ գրավադրվող ժամկետային ավանդի պայմանագրի արժույթի համար << ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը:	
11.	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	Վարկի գումարի կանխիկացման դեպքում գանձվում է բանկային հաշվից կանխիկացման վճար՝ համաձայն Բանկում գործող սակագների	
12.	Տոյժեր	Ամսական նվազագույն վճարը վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.015% օրական Հաշվեգրված տոկոսները վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.1% օրական	

evocaBANK		Վարկավորման պայմաններ և սակագներ	TRM15-0003-06 PUB Խմբագրություն: 141 28/11/2025թ.
13.	Վարկունակության գնահատում /վարկի հաստատման պայմաններ/	Վարկի տրամադրման անհրաժեշտ պայման է հանդիսանում ներկայացման պահին դասակարգված վարկերի բացակայությունը	
14.	Տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է 1 (մեկ) օրվա ընթացքում՝ առանձին դեպքերում, կախված վարկի գումարից, որոշումը կարող է կայացվել մինչև 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: - Վարկը տրամադրվում է դրական որոշման դեպքում, առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:	

10. Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով ապահովված վարկ

1.	Ովքեր կարող են դիմել	Բանկի կողմից թողարկված պարտատոմսերում ներդրում կատարած անձիք, Բանկի հաճախորդներ	
2.	Սահմանաչափ	- ՀՀ դրամով ձեռքբերված պարտատոմսերի անվանական արժեքի մինչև 80% - Այլ արժույթներով ձեռքբերված պարտատոմսերի անվանական արժեքի մինչև 70%	
3.	Սահմանաչափի տեսակ	Վերականգնվող կամ նվազող սահմանաչափով օվերդրաֆտ	Մարման գրաֆիկով վարկ
4.	Մարման ձևը	Վարկառուն պարտավորվում է վճարել կուտակված տոկոսագումարը մինչև քաղվածում նշված վերջնաժամկետը:	«Անուիտետային» «Չսպանակած» «Միանգամյա»
5.	Մարման ժամկետ	Առավելագույնը մինչև ձեռքբերված պարտատոմսերի մարման վերջնաժամկետը	
6.	Արժույթ	ՀՀ դրամ	
7.	Անվանական տոկոսադրույք	ՀՀ դրամի գծով Բանկում սահմանված պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերություն գումարած 2%	
8.	Սահմանաչափի տրամադրման եղանակ	Անկանխիկ, օվերդրաֆտի դեպքում՝ Բանկի վճարային քարտի միջոցով	
9.	Օվերդրաֆտի դեպքում		
	Քաղվածքի օր	Մինչև յուրաքանչյուր ամսվա 10 - ր	
	Վճարման վերջնաժամկետ	Յուրաքանչյուր ամսվա 16-ը (եթե տվյալ ամսվա 16-ը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, ապա վերջնաժամկետ է համարվում հաջորդ աշխատանքային օրը):	
	Արտոնյալ ժամանակահատված	2ի տրամադրվում	
10.	Վերադարձելիության ապահովման միջոց	ԷՎՈԿԱԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսեր: Ընդորում, գրավադրվող պարտատոմսերի և ակնկալվող վարկի գումարի տարբեր արժույթներով լինելու դեպքում, հաշվարկի համար հիմք է ընդունվում տվյալ օրվա դրությամբ գրավադրվող պարտատոմսի արժույթի համար ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը:	
11.	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	Վարկի գումարի կանխիկացման դեպքում գանձվում է բանկային հաշվից կանխիկացման վճար՝ համաձայն Բանկում գործող սակագների	
12.	Այլ վճարներ	Պարտատոմսերի գրավադրման հետ կապված վճար՝ համաձայն գործող սակագների	
13.	Տույժեր	Ամսական նվազագույն վճարը վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.015% օրական Հաշվեգրված տոկոսները վճարման ժամկետին չվճարելու տույժ՝ 0.1% օրական	
14.	Վարկունակության գնահատում /վարկի հաստատման պայմաններ/	Վարկի տրամադրման անհրաժեշտ պայման է հանդիսանում ներկայացման պահին դասակարգված վարկերի բացակայությունը	
15.	Տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	- Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է 1 (մեկ) օրվա ընթացքում, առանձին դեպքերում, կախված վարկի գումարից, որոշումը կարող է կայացվել մինչև 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: - Վարկը տրամադրվում է դրական որոշման դեպքում, առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:	

Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ

Լողացող տոկոսադրույքն այն անվանական տոկոսադրույքն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ SL=S<+SФ, որտեղ՝

SL–Լողացող տոկոսադրույք,

S<- Հաստատուն բաղադրիչ,

SФ-Փոփոխուն բաղադրիչ:

Բանկը տարին երկու անգամ փոփոխում է լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը (SФ) և այդ մասին տեղեկատվությունը ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը հրապարակում է Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը (SФ), կախված վարկի արժույթից, որոշվում է հետևյալ շուկայական տոկոսադրույքների միջոցով՝

➤ ՀՀ դրամով հիմնական՝

Փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը: ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները (եկամտաբերության կոր)՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx>:

Փոփոխուն բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված

տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Փոփոխում բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը:

➤ ՀՀ դրամով երկրորդային՝

Փոփոխում բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ ավանդների) ներգրավված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները: Ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ ավանդների) ներգրավված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

Երկրորդային փոփոխում բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

➤ ԱՄՆ դոլարով հիմնական՝

Փոփոխում բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքը (CME Term SOFR USD 6 Month): ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ «Բլումբերգ» համակարգի տերմինալում TSFR6M հղմամբ ներկայացված տեղեկատվությունը:

Փոփոխում բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխում բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Փոփոխում բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

➤ ԱՄՆ դոլարով երկրորդային՝

Փոփոխում բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

Փոփոխում բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխում բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Փոփոխում բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը:

➤ Եվրոյով հիմնական՝

Փոփոխում բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Եվրոպական Միջբանկային Առաջարկի տոկոսադրույքը (EMMI EURIBOR 6 Month): Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Եվրոպական Միջբանկային Առաջարկի տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ «Բլումբերգ» համակարգի տերմինալում EUR006M հղմամբ ներկայացված տեղեկատվությունը:

Փոփոխում բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխում բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Փոփոխում բաղադրիչը հաշվարկվում է նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

➤ Եվրոյով երկրորդային՝

Փոփոխում բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում Գերմանիայի Եվրոյով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության տոկոսադրույքը: Գերմանիայի Եվրոյով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնության տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ «Բլումբերգ» համակարգի տերմինալում YCGT0016 հղմամբ ներկայացված տեղեկատվությունը:

Առաջնայինից երկրորդային փոփոխում բաղադրիչի անցնելու դեպքում կարող է կիրառվել ճշգրտման գործակից: Ընդ որում, երկրորդակին բաղադրիչի հաշվարկման դեպքում ճշգրտման գործակիցը հաշվարկվում է՝ ենթելով նախորդ ժամանակահատվածի համար հաշվարկված հիմնական բաղադրիչի միջին արժեքի և նույն ժամանակահատվածի համար հաշվարկված երկրորդային բաղադրիչի միջին արժեքի տարբերությունից, որը գումարվում է նոր ժամանակահատված/ներ/ի համար հաշվարկվող երկրորդային բաղադրիչին: Օրինակ, եթե նախորդ ժամանակահատվածում հիմնական բաղադրիչի հաշվարկված միջին արժեքը 8.5% է եղել, և նույն ժամանակահատվածի համար հաշվարկված երկրորդային բաղադրիչի արժեքը 9.5% է եղել, տարբերությունը՝ -1.0%-ը, գումարվելու է հաջորդող ժամանակահատվածների համար հաշվարկվող երկրորդային բաղադրիչին: Օրինակ, եթե հաջորդող ժամանակահատվածի երկրորդային բաղադրիչի արժեքը 9.65% է, ճշգրտող գործակցի կիրառման դեպքում կլինի 8.65%: Ճշգրտվող գործակիցը ներկայացվում է Վարչության հաստատմամբ:

Փոփոխում բաղադրիչի միջին թվաբանականը կլորացվում է 0.5%-ի քայլով: Օրինակ, եթե տոկոսադրույքը մեծ է 6.75%-ից և փոքր կամ հավասար է 7.25%-ից, ապա կլորացման արդյունքում ստացվում է 7.0%, եթե մեծ է 7.25%-ից և փոքր կամ հավասար է 7.75%-ը՝ 7.5%:

Փոփոխում բաղադրիչի բացասական արժեք լինելու դեպքում Բանկի կողմից կիրառվում է 0% նվազագույն շնմբ:

